Հավելված 6
*« ՇՄԱՀ ԳՀԽԾՁԲ-24/ 26 »** **ծածկագրով**
գնանշման հարցման հրավերի

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՎՏՈՒՆ,ԳՏԱՇԵՆ ԵՎ ԱՐԵԳՆԱԴԵՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻԿԱՌՈՒՑՄԱՆ, ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԹՎՈՎ 2 ԲԱՆՁՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓՈՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԲՆԲՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՄԱՀ ԳՀԽԾՁԲ-24/ 26 /1

Գ Ամասիա. *«29» Հոկտեմբերի 2024 թ.*

Ամասիայի համայնքապետարանը , ի դեմս համայնքի ղեկավար Ջ.Հարությունյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՄԻԿՊՐՈ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Միքայելյանիի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ամասիա համայնքի Հովտուն, Գտաշեն և Արեգնադեմ բնակավայրերի բնական գազի ներքին ցանցի կառուցման, Ամասիա բնակավայրում թվով 2 բազմաբնակարան շենքերի տանիքնե վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազզման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

---

[1] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա «մատուցվում է» բառից հետո լրացվում է « քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և» բառերը*

[2] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա 2.1.2 կետի «ա» պարբերությունը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ. «Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը.»:*

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[3]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[4]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _____ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում

---

[3] Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:

[4] Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծի 3.1 կետը 2-րդ նախադասությունից հետո լրացվում է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ, «Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը , տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ:Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:»:

պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3304000 (երեք միլիոն երեքհարյուր չորս հազար) ՀՀ դրամ:[5]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև---------- (----------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:[6]

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[7]

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

---

[5] Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

[6] Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

[7] Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[8]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[9] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[10]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[8] Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

[9] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[10] Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծը լրացվում է հետևյալ բովանդակությամբ 5.5.1 կետով. «5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, ,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.
...» իսկ 5.4 կետում «5.2 և 5.3 » թվերը փոխարինվում են «5.2,5.3 և 5.5.1» թվերով:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[11]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[12]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[13]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[11] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

[12] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[13] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[14]

---

[14] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Համայնքի ղեկավար Ջ. Հարությունյան Ամասիայի համայնքապետարան ՀՎՀՀ 05544328 ՀՀ 900222051271 Բանկը Կենտրոնական գանձապետարան	«ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի Հաղթանակի Պ./Շ/ 64 ՀՎՀՀ՝ 05553818 «ԻՆԵԿՈ ԲԱՆԿ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ Հ/Հ 20501222384310 01
_____ *(ստորագրություն)*	_____ *(ստորագրություն)*
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«29» դեկտեմբերի 2024 թ. կնքված
ՇՄԱՀ ԳՀԽԾՁԲ-24/ 26/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
3	71241200/3	ՀՀ Շիրակի Ամասիա համայնքի Հովտուն, Գտաշեն և Արեգնադեմ բնակավայրերի բնակյան գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ	դրամ	2477000	1	ՀՀ Շիրակի մարզ Ամասիա համայնք, Բանդիվան բնակավայր,	Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օր:
4.	71241200/4	ՀՀ Շիրակի Ամասիա բնալավայրում թվով 2 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ	դրամ	827000	1		

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

<u>Ռուսերեն և հայերեն լեզուներով հրապարակված հայտարարության և (կամ) հրավերի տեքստերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:</u>

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ամասիայի համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
ՀՀ 900222051271
Հանկը Կենտրոնական գանձապետարան
Համայնքի ղեկավար
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի
Հաղթանակի Պ./Շ/ 64
ՀՎՀՀ՝ 05553818
«ԻՆԵԿՈ ԲԱՆԿ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 20501222384310 01

/ստորագրություն/ Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին 3

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏՈՒՆ, ԳՏԱՇԵՆ և ԱՐԵԳՆԱԴԵՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ**	
Ծրագրի անվանումը	ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հովտուն, Գտաշեն և Արեգնադեմ բնակավայրերի բնական գազի ներքին ցանցի կառուցում
Պատվիրատու	ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքապետարան
Աշխատանքների անվանումը	**ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հովտուն, Գտաշեն և Արեգնադեմ բնակավայրերի բնական գազի ներքին ցանցի կառուցում** **աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման խորհրդատվական ծառայություններ**
Բնակավայրի գտնվելու վայրը	ՀՀ Շիրակի մարզի **Ամասիա** *Համայնք՝ Երևանից - 150 կմ Մարզկենտրոնից – 25կմ* *Հովտուն՝ Երևանից - 148 կմ, Մարզկենտրոնից – 23 կմ* *Գտաշեն՝ Երևանից - 144 կմ, Մարզկենտրոնից – 22 կմ* *Արեգնադեմ՝ Երևանից - 142 կմ, Մարզկենտրոնից – 22,6 կմ* :
Գազատարի երկարություն	Ցածր ճնշման գազատար՝ ≈6200 գծ.մ *Նախատեսվում է Գտաշեն, Հովտուն և Արեգնադեմ բնակավայրերում կառուցել 6200մ գազատար, որից 2200մ Գտաշեն բնակավայրում, 1500մ Հովտուն բնակավայրում և 2500մ Արեգնադեմ բնակավայրում* Միջին ճնշման գազատարի երկարությունը համաձայն տեխնիկական պայմանի:
Աշխատանքի տեսակը	Գազաֆիկացում
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Տրամադրվող փաստաթղթերը	1. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանք 2. Տեղեկանք շինարարական աղբի հեռացման վերաբերյալ: 3. □Գազպրոմ Արմենիա□ ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայման:
Ընդհանուր դրույթներ	• Ծավալաթերթ-նախահաշիվ ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների կշիռների վերաբերյալ՝ աշխատանքների ընդհանուր նախահաշվային արժեքի նկատմամբ /թղթային և էլեկտրոնային/: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով (ծավալաթերթը՝ նաև ռուսերեն), հնգական թղթային օրինակով /գունավոր/ և մեկ էլեկտրոնային տարբերակով:

(PDF ֆորմատով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով)՝ յուրաքանչյուր բնակավայրինը առանձին:

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթեռնելի /էլեկտրոնային տարբերակով տրամադրվող փաստաթղթը պետք է համապատասխանեն 2010 թվականի սեպտեմբերի 24-ի ՀՀ կառավարության □Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնական փաստաթղթաշրջանառությունում պարտադիր կիրառման հայկական համակարգչային տառատեսակները հաստատելու մասին□ Ա 1259-Ն որոշման պահանջներին՝ «ՂԷԱ Գրապալատ» (GHEA Grapalat), «ՂԷԱ Մարիամ» (GHEA Mariam)/

Համապատասխան սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հիմնական պարտականություններ՝

✓ Ինժեներաերկրաբանական հետազննման աշխատանքների իրականացում,

նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, տալ համապատասխան եզրակացություն (կլիմայի, ռելիեֆի, սեյսմիկ, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաերկրաբանությունը):

✓ Իրականացնել տեղանքի հանույթ՝ ուղղահայաց և հորիզոնական:

Հետազննման վերաբերյալ պահանջներ՝

✓ Հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 նորմերին համապատասխան և նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,

✓ հետազննման ընթացքում իրականացնել առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծերի նկատմամբ պահանջներ

✓ Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, նորմերին և ԳՈՍՏ-ի պահանջներին:

Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝

✓ Պահանջվում է նախագծել մագիստրալ գազատարի և ներբնակավայրային ճյուղերի գազաֆիկացման աշխատանքները:

✓ Տալ գազատարի անցկացման եղանակը՝ վերգետյա կամ ստորգետյա տարբերակով /ըստ տեխնիկական պայմանի/:

✓ Ըստ տեխնիկական պայմանի հաշվարկային եղանակով ստանալ գազատարի խողովակի տրամագիծը, ճնշման հաշվարկային ցուցանիշները:

✓ Գազատարի նախագծման ընթացքում հաշվի առնել գազատարի անխափան աշխատանքը կապված՝ խորության կամ բարձրության՝ դաշտամիջյան ճանապարհի համար անցումների կառուցման /վերգետնյա տարբերակի ժամանակ/, համագործակցել վարչական ղեկավարի հետ:

✓ Պատյանների տեղադրում ճանապարհների տակ /ստորգետնյա տարբերակի ժամանակ/: Շահագործման համար նախատեսված ճանապարհի նախագծում /եթե դրա անհրաժեշտություն կա/:

✓ Նախագծման ժամանակ կապ պահպանել համայնքապետարանի մասնագետների հետ, հնարավորինս խուսափելով վարելահողերի օգտագործումից:

Հիմնական պարտականություն ներ և պահանջներ

- ✓ Ներբնակավայրային ճյուղերի նախագծման ժամանակ սերտորեն համագործակցել համայնքապետարանի մասնագետների հետ:
- ✓ Հողային աշխատանքի պարագայում ուսումնասիրել տեղանքի ենթակառուցվածքների գոյության առկայությունը:
- ✓ Նախագծելիս կատարել հնարավորինս հավասարաչափ բաշխում ըստ բնակիչների տների հեռավորության:
- ✓ Նախագծման ընթացքում սերտորեն համագործակցել □ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ԳԳՄ□-ի հետ:

Նախագծի կազմի նկատմամբ պահանջներ՝

Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն համաձայն 2017թ. սեպտեմբերի 11-ի թ. 128-Ն հրամանով սահմանված պահանջներին և ներառեն ոչ պակաս քան ստորև նշվածը՝

- ✓ Ներկայացնել բացատրագիր, որը կներառի աշխատանքների կազմակերպման, անվտանգության կանոնների պահպանման, տեղամասի վիճակի, հետազոտման արդյունքների, ինչպես նաև հնարարվոր խոչընդոտների վերաբերյալ:
- ✓ Կազմել ՊՕՀ /շին արտադրության կազմակերպում/:
- ✓ Գլխավոր հատակագիծ՝ նշել հնարավոր ինժեներական ցանցերը և ենթակառուցվածքները:
- ✓ Աշխատանքային ռեսուրսների ցանկ:
- ✓ Օրացուցային գրաֆիկ:
- ✓ Օգտագործվող նյութերի համառոտ եզրակացություն (մակնիշավորում, երաշխավորագիր) լաբորատոր փորձարկման ենթակա նյութերի ցանկը, համաձայն գործող ԳՕՍՏ-երի:
- ✓ Պահանջվող տեխնիկական միջոցների ցանկ:
- ✓ Շինարարական կազմակկերպություններից պահանջվող լիցենզիաները:
- ✓ Կառուցվող օբյեկտի երաշխիքային ժամկետ /համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի մայիսի 04-ի թիվ ԳՍ /20.1/12936-2023 հանձնարարականի առաջարկվում է սուբվենցիոն ծրագրերի երաշխիքային ժամկետ սահմանել առնվազն երեք տարի:
- ✓ Ինժեներաերկրաբանական եզրակացություն /համապատասխան լիցենզիան/:
- ✓ Ինժիներա-գեոդեզիական հանույթ ներբնակավայրային ճյուղերի համար /համապատասխան լիցենզիան/:
- ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքնության եզրակացություն:
- ✓ Նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),
- ✓ Տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ և այլն),
- ✓ Ամփոփագրեր /այդ թվում համահավաք ամփոփագիր/
- ✓ Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի),
- ✓ Նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ),
- ✓ Նախագծման ընթացքում հանդիպում են նախագծման նորմերին ու կանոններին ոչ համապատասխան խոչընդոտներ /ապօրինի

	շինություններ, ժամանակավոր կառույցներ, լուսավորության հենասյուներ, ծառեր և ոչ նորմատիվային խորության մալուխներ և այլ գծեր/: Հարցը ներկայացնել պատվիրատուին և համաձայնեցնելուց հետո նախագծման նորմերի և կանոնների շեղման վերացումը ընդգրկել նախագծա- նախահաշվային փաստաթղթերի մեջ: ***Համաձայնեցումներ՝*** ✓ Քաղաքաշինական փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական /փորձաքննությունը իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան լիցենզիա և ներդիր, որը պատվիրատուին է տրամադրվում, փորձաքննության եզրակացության հետ/ ✓ Պատվիատուի հետ համաձայնեցնել շինարարական աղբի տեղը, ✓ Նախագիծը համաձայնեցնել շահագռգիռ մարմինների (գազ, լույս, ջուր, կապ, ԱԻՆ, ՏՐԱՆՍԳԱԶ) հետ, տալով գրավոր համաձայնություն, հաստատված կազմակերպության կնիքով: ✓ Տեխնիկական հսկողության և հեղինակայի հսկողության ծառայությունների արժեքները համաձայնեցնել պատվիրատուի հետ:
Նորմատիվային պահանջներ	- ՀՀՇՆ-2.03.01-04 Գազաբաշխիչ համակարգեր - ՇՆՁ IV 12.101-04 Անվտանգության կանոները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգի - ՀՀՇՆ- IV -12.03.01-04 - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ N 263-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերին, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.08.2022թ N 21-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերին,

Աշխատանքի կատարման ժամկետը

Սկիզբը	***Ավարտը***
Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտը՝ պայմանագրի կնքման օրից 30 (երեսուն) օրացուցային օր:

Չափաբաժին 4

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԿՈՒ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ	
Ծրագրի անվանումը	Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում
Պատվիրատու	ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքապետարան
Աշխատանքների անվանումը	***Ամասիա բնակավայրում թվով 2 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման*** **աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման խորհրդատվական ծառայություններ**

Բնակավայրի գտնվելու վայրը	ՀՀ Շիրակի մարզիԱմասիա համայնքի Ամասիա բնակավայրը գտնվում է ՀՀ Շիրակի մարզկենտրոն Գյումրի քաղաքից մոտ 25 կմ հեռավորության վրա: 1. *24-րդ փողոց, 8-րդ շենք* 2. *26-րդ փողոց, 13-րդ շենք* Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները
Աշխատանքի տեսակը	Ձեղնահարկի պատուհաների ապամոնտաժում 3. Ջրհորդանի քանդում (ներառյալ տախտակամածը) 4. Տանիքի փայտանյութի և կավարամածի քանդում * ծածկի կառուցում պրոֆ.ցինկ.թիթեղից ԿՊ-25-0.55 հաստ /կավարամածով/ 3. Ջրհորդանի և ջրահավաքի կառուցում 30մմ տախտակամածով ցինկապատ 0.55 թիթեղից5.փայտե վնասված կոնստրուկցիաների ապամոնտաժում 4. Ցինկապատ **կառուցման աշխատանքներ** 1. Տանիքի փայտե կոնտրուկցիաների իրականացում 2. Տանիքի թիթեղից D=150մմ ջրահեռացման խողովակների տեղադրում 5. Օդափոխության բլոկների և տանիքածածկի միացման տեղերի թիթեղապատում ցինկապատ թիթեղով 0.55մմ 6. Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն 7. Տանիքի ջերմամեկուսիչ շերտի իրականացում խարամով 10 սմ 8.Տանիքի մտոցի մետաղապլաստե դռնակի տեղադրում 9.Ձեղնալուսամուտների իրականացում 10. Մետաղական ճաղաշարի տեղադրում և յուղաներկում 11.Օդատար բլոկների գլխադիրի իրականացում հարթ ցինկապատ թիթեղով **Ընդամենը՝ ≈1700մ2** **՝ Նախագծման աշխատանքների ժամանակ վերը նշված պարամետրերը կարող են ՐՈՒշադություն փոփոխվել ըստ անհրաժեշտության**
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Տրամադրվող փաստաթղթերը	1. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանք 2. Տեղեկանք շինարարական աղբի հեռացման վերաբերյալ: 3. Շենքերի հատակագիծ:
Ընդհանուր դրույթներ	• Ծավալաթերթ-նախահաշիվ ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների կշիռների վերաբերյալ՝ աշխատանքների ընդհանուր նախահաշվային արժեքի նկատմամբ /թղթային և էլեկտրոնային/:

Հիմնական պարտականություններ և պահանջներ	• Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով (ծավալաթերթը՝ նաև ռուսերեն), հնգական թղթային օրինակով /գունավոր/ և մեկ էլեկտրոնային տարբերակով: (PDF ֆորմատով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով)՝ յուրաքանչյուր շենքինը առանձին: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթեռնելի /էլեկտրոնային տարբերակով տրամադրվող փաստաթղթը պետք է համապատասխանեն 2010 թվականի սեպտեմբերի 24-ի ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնական փաստաթղթաշրջանառությունում պարտադիր կիրառման հայկական համակարգչային տառատեսակները հաստատելու մասին И 1259-Ն որոշման պահանջներին՝ «ՂԷԱ Գրապալատ» (GHEA Grapalat), «ՂԷԱ Մարիամ» (GHEA Mariam)/ Համապատասխան սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: ***Հիմնական պարտականություններ՝*** ✓ Ինժեներաերկրաբանական հետազննման աշխատանքների իրականացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, տալ համապատասխան եզրակացություն (կլիմայի, ռելիեֆի, սեյսմիկ, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաերկրաբանությունը): ***Հետազննման վերաբերյալ պահանջներ՝*** ✓ Հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 նորմերին համապատասխան և նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով, ✓ հետազննման ընթացքում իրականացնել առկա վիճակի տեսանկարահանում: ***Նախագծերի նկատմամբ պահանջներ*** ✓ Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, նորմերին և ԳՈՍՏ-ի պահանջներին: **Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝** ✓ Պահանջվում է նախագծել մագիստրալ գազատարի և ներբնակավայրային ճյուղերի գազաֆիկացման աշխատանքները: ✓ Տալ գազատարի անցկացման եղանակը՝ վերգետյա կամ ստորգետյա տարբերակով /ըստ տեխնիկական պայմանի/: ✓ Ըստ տեխնիկական պայմանի հաշվարկային եղանակով ստանալ գազատարի ***Նախագծի կազմի նկատմամբ պահանջներ՝*** **ապամոնտաժման աշխատանքներ** 1. Տանիքի ծածկի քանդում ազբոշիֆերից 2. Ձեղնահարկի պատուհաների ապամոնտաժում 3. Ջրհորդանի քանդում (ներառյալ տախտակամածը) 4. Տանիքի փայտանյութի և կավարամածի քանդում 5.փայտե վնասված կոնստրուկցիաների ապամոնտաժում

***կառուցման աշխատանքներ**

1. Տանիքի փայտե կոնտրուկցիաների իրականացում
2. Տանիքի ծածկի կառուցում պրոֆ.ցինկ.թիթեղից ԿՊ-25-0.55 հաստ /կավարամածով/
3. Ջրհորդանի և ջրահավաքի կառուցում 30մմ տախտակամածով ցինկապատ 0.55 թիթեղից
4. Ցինկապատ թիթեղից D=150մմ ջրահեռացման խողովակների տեղադրում
5. Օդափոխության բլոկների և տանիքածածկի միացման տեղերի թիթեղապատում ցինկապատ թիթեղով 0.55մմ
6. Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն
7. Տանիքի ջերմամեկուսիչ շերտի իրականացում խարամով 10 սմ
8. Տանիքի մտոցի մետաղապլաստե դռնակի տեղադրում
9. Ձեղնալուսամուտների իրականացում
10. Մետաղական ճաղաշարի տեղադրում և յուղաներկում
11. Օդատար բլոկների գլխադիրի իրականացում հարթ ցինկապատ թիթեղով

12.Քանդված նյութերի հանձնում պատվիրատուին

Նախագծման աշխատանքների ժամանակ վերը նշված պարամետրերը կարող են ոոՈւշադություն փոփոխվել ըստ անհրաժեշտության
Ընդամենը՝ ≈1700մ2

Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն համաձայն 2017թ. սեպտեմբերի 11-ի թ. 128-Ն հրամանով սահմանված պահանջներին և ներառեն ոչ պակաս քան ստորև նշվածը՝

- ✓ Ներկայացնել բացատրագիր, որը կներառի աշխատանքների կազմակերպման, անվտանգության կանոնների պահպանման, տեղամասի վիճակի, հետազոտման արդյունքների, ինչպես նաև հնարարվոր խոչընդոտների վերաբերյալ:
- ✓ Կազմել ՊՕՀ /շին արտադրության կազմակերպում/:
- ✓ Գլխավոր հատակագիծ՝ նշել հնարավոր ինժեներական ցանցերը և ենթակառուցվածքները:
- ✓ Աշխատանքային ռեսուրսների ցանկ:
- ✓ Օրացուցային գրաֆիկ:
- ✓ Օգտագործվող նյութերի համառոտ եզրակացություն (մակնիշավորում, երաշխավորագիր) լաբորատոր փորձարկման ենթակա նյութերի ցանկը, համաձայն գործող ԳՕՍՏ-երի:
- ✓ Պահանջվող տեխնիկական միջոցների ցանկ:
- ✓ Շինարարական կազմակկերպություններից պահանջվող լիցենզիաները:
- ✓ Կառուցվող օբյեկտի երաշխիքային ժամկետ /համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի մայիսի 04-ի թիվ ԳՍ /20.1/12936-2023 հանձնարարականի առաջարկվում է սուբվենցիոն ծրագրերի երաշխիքային ժամկետ սահմանել առնվազն երեք տարի:
- ✓ Ինժեներաերկրաբանական եզրակացություն /համապատասխան լիցենզիան/:
- ✓ Ինժիներա-գեոդեզիական հանույթ ներբնակավայրային ճյուղերի համար /համապատասխան լիցենզիան/:
- ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքնության եզրակացություն:
- ✓ Նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),

- ✓ Տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ և այլն),
- ✓ Ամփոփագրեր /այդ թվում համահավաք ամփոփագիր/
- ✓ Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի),
- ✓ Նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ),
- ✓ Նախագծման ընթացքում հանդիպում են նախագծման նորմերին ու կանոններին ոչ համապատասխան խոչընդոտներ /ապօրինի շինություններ, ժամանակավոր կառույցներ, լուսավորության հենասյուներ, ծառեր և ոչ նորմատիվային խորության մալուխներ և այլ գծեր/: Հարցը ներկայացնել պատվիրատուին և համաձայնեցնելուց հետո նախագծման նորմերի և կանոնների շեղման վերացումը ընդգրկել նախագծա- նախահաշվային փաստաթղթերի մեջ:

Համաձայնեցումներ՝

- ✓ Քաղաքաշինական փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական /փորձաքննությունը իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան լիցենզիա և ներդիր, որը պատվիրատուին է տրամադրվում, փորձաքննության եզրակացության հետ/
- ✓ Պատվիատուի հետ համաձայնեցնել շինարարական աղբի տեղը,
- ✓ Նախագիծը համաձայնեցնել շահագռգիռ մարմինների (գազ, լույս, ջուր, կապ, ԱԻՆ, ՏՐԱՆՍԳԱԶ) հետ, տալով գրավոր համաձայնություն, հաստատված կազմակերպության կնիքով:
- ✓ Տեխնիկական հսկողության և հեղինակայի հսկողության ծառայությունների արժեքները համաձայնեցնել պատվիրատուի հետ:

Նորմատիվային պահանջներ

- Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ շինարարական նորմերով և ԳՕՍՏ ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:
- Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ԳՕՍՏ ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն:
- Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ, ՇՆՈՒԿ շինարարական նորմերով, մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն:
- ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցներով սահմանված պահանջների համաձայն:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն և 2015թ. մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:
- Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ԳՕՍՏ ստանդարտներով սահմանված կանոնների , 2015թ. մարտի 19-ի № 596-Ն որոշման և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն:

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ N 263-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և

	գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերին, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.08.2022թ N 21-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերին,
Աշխատանքի կատարման ժամկետը	
Սկիզբը	***Ավարտը***
Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտը՝ պայմանագրի կնքման օրից 30 (երեսուն) օրացուցային օր:

Հավելված N 2
«29» հոկտեմբերի 2024 թ. կնքված
ՇՄԱՀ ԳՀԽԾՁԲ-24/ 26 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
3:	71241200/3	Ամասիա համայնքի Հովտուն, Գտաշեն և Արեգնադեմ բնակավայրերի բնական գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություն												1575000	1575000

4.	71241200/4	Ամասիա բնակավայրում թվով 2 բազնաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվայի փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություն												495000	495000

** Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ամասիայի համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
ՀՀ 900222051271
Բանկը Կենտրոնական գանձապետարան

Համայնքի ղեկավար՝_____ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի
Հաղթանակի Պ./Շ/ 64
ՀՎՀՀ՝ 05553818
«ԻՆԵԿՈ ԲԱՆԿ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 20501222384310 01

_____
/ստորագրություն/
Կ.Տ

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Ամասիայի համայնքապետարան	«ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ
ՀՎՀՀ 05544328	ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի
ՀՀ 900222051271	Հաղթանակի Պ./Շ/ 64
Բանկը Կենտրոնական	ՀՎՀՀ՝ 05553818
գանձապետարան	«ԻՆԵԿՈ ԲԱՆԿ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
	Հ/Հ 20501222384310 01
Համայնքի ղեկավար՝_____	_____
Կ.Տ	/ստորագրություն/
	Կ.Տ